ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը. Արման Պողոսյան, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները. Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք. Նյու Յորք, 2023 թվականի նոյեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 19-ը:

3. Հրավիրող կողմը. Միավորված ազգերի զարգացման ծրագիր (UNDP)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակը Ֆինլանդիայի և Նորվեգիայի կառավարությունների, Կոլումբիայի համալսարանի և ՄԱԶԾ համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվող «Dialogue on Tax and the Sustainable Development Goals» միջոցառմանը մասնակցելն էր, որը հնարավորություն տվեց ծանոթանալ և քննարկել հարկերի միջոցով կայուն զարգացման նպատակներին հասնելու ժամանականից զարգացումները, ինչպես նաև հարկային քաղաքականության և վարչարարության ուղղությամբ համագործակցության հնարավորությունները:

5. Քննարկված թեմաները. Միջոցառման ընթացքում քննարկվել են բազմաթիվ թեմաներ, որոնք հիմնականում տեղի են ունեցել պանելային քննարկումների տեսքով, մասնա-վորապես.

1) Հարկային քաղաքականություն համընդհանուր բարիքի համար,
2) Հարկի դերը համաշխարհային պարտքի և տոկոսադրույքների համատեքստում,
3) Կլիմայի հետ կապված խնդիրները և հարկերը,
4) Կայուն և ամուր հարկային համակարգերի և հարկային վարչարարության ձևավորումը,
5) Հարկերի միջոցով կայուն զարգացման նպատակներին հասնելու մարտահրավերները և հնարավորությունները,
6) Անօրինական ֆինանսական հոսքերի դեմ պայքարը,
7) Հարստության, կապիտալի և սոցիալ-տնտեսական կայունության հավասարակշռումը,
8) Հարկման ոլորտում բազմակողմ համագործակցությունը,
9) Տնտեսագիտության ինտեգրումը հարկային քաղաքականությունում,
10) ԶԼՄ-ների ազդեցությունը հարկային քաղաքականության վրա,
11) Հարկաբյուջետային քաղաքականությունը բարեկեցության, ներառականության և համերաշխության համար,
12) Կայուն զարգացման նպատակների հարկային շրջանակը,
13) Հարկային կարգապահության ուժեղացումը տեխնիկական աջակցության միջոցով,
14) Գենդերային հավասարության զարգացումը հարկային քաղաքականության միջոցով,
15) Հարկային թափանցիկությունը որպես կայուն զարգացման միջոցների աղբյուր,

16) Հարկումը և անհավասարությունը,
17) Արհեստական բանականությունը և հարկային վարչարարության ապագան:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման ընթացքում հանդես եմ եկել ելույթներով «Հարկերի միջոցով կայուն զարգացման նպատակներին հասնելու մարտահրավերները և հնարավորությունները» և «Կայուն զարգացման նպատակների հարկային շրջանակ» թեմաների շրջանակներում՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում հարկերի միջոցով կայուն զարգացման նպատակներին հասնելու հնարավորությունները, ինչպես նաև Միավորված ազգերի զարգացման ծրագիր (UNDP) հետ համագործակցության ընթացքը և արդյունքները:

Բացի վերոնշյալից, արժեքավոր հանդիպումներ եմ ունեցել միջազգային գործընկերների և գիտական համայնքի ականավոր ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP) հետ՝ հարկային քաղաքականության ուղղությամբ իրականացվելիք մի շարք բարեփոխումների ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Ֆինանսների նախարարի տեղակալ
Արման Պողոսյան

Recoverable Signature

X

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482

22.11.2023թ.